

Urethane

Urethane

Urethane

891.99

U-96

1914

0381
6071

1914 № 2052

6 NOV 2017

ՄԻԲ. ՄՈՒԹԵՓԵՆՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЭКОНОМИЧЕСКИХ
НАУК
СССР

ՏԱՆԶԱՆԻ



ԲՈՎԻՑ



Ա. ԽԱՆՆԻՍԻԱՆ
Արագածիկ Մ. Գրիգորեանի
1914

891.99

Կ-96

(3)

142

6071

891.99

4-96

СЛ. 70. 40

ՄԻԶ. ՄԱՐԻՇԱՆԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՏԱՆԶԱՆԻ ԲՈՎԻՑ



Ա. Ա. Բ. Ա. Բ.

Սրագառիկ Մ. Գրիգորյանի

1914

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
1999

ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
84509



59889-66

«Если жизнь тебя обманет
Не печалься не сердись,
Въ день уныня смирись,
День веселья вѣрь настанетъ»

Пушкинъ

I

Երկնքից մութ ամպերը կախել էին. հիւսիսային կողմը կայծակը սարսափելի կերպով ճայթճայթում էր և որին հետևում էր ամպերի ահուելի գոռոցը: Սաստիկ քամին ճանապարհի վրայի փողին բարձրացնում և խառնում էր վերևի մռայլի հետ և արդելում մարդու մի քանի քայլ հեռուն տեսնել: Քամին իմ քայլերը արագացնում էր. թէև ես այժմ էլի տալիս իմ ոտներին, բայց գնում էի դեպի առաջ ամենայն սաստկութեամբ:

Ես մօտեցայ մի մեծ ձորի, որի երկու կողմի ժայռերը այնքան բարձր էին, որ ներքև նայելիս՝ հազիւ էր երևում օձապտոյտ գետը, որը

իր խուլ դողոցով սողում էր առաջ: Ինձանից մի քանի քայլ հեռու, ժայռի գագաթին, յանկարծ նկատեցի մի մարդկային կերպարանք, որը երեսը առած ձեռների մէջ, նստած խորհր մտածում էր, կարծես առանց նկատելու ընտելեան ահուելի արհաւիրքը: Նրա մտքի մէջ տեղացող փոթորիկը, գողոցը, ճայթիւնը՝ կարծես աւելի գօրեղ էին, քան տիեզերքինը: Նրա գլուխը բաց էր, մազերի գեղեցիկ գանգաւրները քամուց, ծովի ալիքների նման, ալեկոծւում էին: Նրա նրստած տեղը այնքան վտանգաւոր էր, որ ամենափոքր անգգոյշ շարժումն անգամ, կարոն էր նրան գլորել անդունդի խորքը:

Ես սարսափելով մօտեցայ նրան և դողդոջոյն ձայնով հազիւ կմկմացի. — «Այ մարդ, վեր կաց»:

Նա բոլորովին չը լսեց իմ ձայնը, կարծես քաւացել էր ժայռի նման: Զեռքս զրի ուսին և պինդ կերպով ցնցեցի նրան և նորից ձայն աւելի: Նա երեսը դարձրեց դէպի ինձ. նոյն բոպէին

քամին փոփռացրեց նրա երեսի վրայ թափւած մազերը, որոնց տակից երեւցին նրա աչքերը. աւանդ, որքան տանջանք և յուսախաբուութիւն էին արտայայտում այդ գոյգ թախծալի աչքերը:

— Ինչն է քեզ ստիպել այսպիսի եղանակին գալ և նստել մի այսպիսի վտանգաւոր տեղ:

— Հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից. ինչո՞ւ ես հետաքրքրւում իմ վիճակով, ես մարդկանց չեմ սիրում, նրանք անխիղճ են. ես համոզւած եմ, որ մարդ արարածը իւր ընկերի հետ կ'իսօսի, կ'գործէ, երբ նրանից իր համար մի որևէ օգուտէ աղնկալում. իսկ կարեկցութիւնը հեռու է մարդկային սրտից: Ուրեմն հեռացիր ինձանից, ինձ համար ամպերի գողոցը, կայծակի ճայթիւնը, ահեղ փոթորիկը, աւելի լաւ է, քան մարդկային նենգամիտ սիրտը, կեղծաւոր լեզուն և սատանայական որոգայթները:

— Դու յուսահատւած ես, բայց, ի՞նչն է պատճառը. կարելի է անմեղ մօրդ ես սպաննել,

կամ սիրունի՞դ է քեզ խաբել, գուցէ անկարելի՞ց
ես մնացել...

— Ես կեանքումս անմեղի արիւն չեմ թա-
փել. իսկ ի՞նչ է կանացի սէրը, եթէ ոչ բոպե-
տկան զեփիւռ, ըոր կարողէ տանջւած սիրտը մի-
այն մի բոպէ հովացնել. իսկ կարեկցութեան՝
ես բոլորովին պէտք չեմ ունեցել, որովհետեւ բը-
նութիւնից պարզեւած բոլոր անդամներս առողջ
են և աշխատելը ինձ համար ծանր չի թւում:

Ուրեմն ի՞նչն է քեզ ստիպել առելու մարդ-
կանց, մի՞թէ քո սրտում չ'կայ մի իղեալ, որը
ստիպէ քեզ՝ ապրել ու գործել:

— Ապրել, ինչո՞ւ համար. գործել, ո՞ւմ հա-
մար... Ես շատ գործեցի. թէ գիւղ, թէ քաղաք
ոտի տակ տւի, ուղեցի պաշտպանել թոյլին՝ ու-
ժեղի զէմ կուելով, ես նրան իմ զէմ զինեցի.
Իսկ ստրկացած թոյլը անցաւ ուժեղի կողմը, նրա
ոտները լիզեց, նրա սիրտը շահեց և նրա հետ
բաշեկամանալով դարձաւ ինձ ասաց: «Դու խե-

ղագոր ես, ինչե՞ր ես ասում, առանց ուժեղին
մենք չենք կարող ապրել»: Այսպէս, նա ևս ա-
տելով՝ խելագար անւանեց ինձ:

— Եւ դու այդ բանից յուսահատեցար ու
փախար ժողովրդից, — հարցրի ես նրան:

— Ոչ, այդ բանը ինձ բոլորովին չը վհատեցրեց:
Ես յիշեցի Մեծ Մարգարէի խօսքերը, «Ներիր
սղանց Հայր, որովհետեւ չ'գիտեն թէ ինչ են ա-
նում»: Ես այլ միջոցներ մտածեցի, ձայն տւի
հասկացող ընկերներին, որ դան ինձ օգնեն՝ թըշ-
ւառին համոզելու և յափշտակողի զէմ կուելու...

Ինձ շրջապատեցին շատ ընկերներ. ուսում ա-
ռած, շքեղ հագնւած, խօսքերով ոգևորւած: Մենք
հաւաքւեցինք. սի ինչ գեղեցիկ ծրագրներ, ինչ
վէճ իղէալներ գծեցինք: Ես ուրախ էի և հա-
մոզւած, որ կարճ ժամանակամիջոցում թշւա-
ռին կը փրկենք լափողի ճիրաններից:

Անցան մի քանի շաբաթներ և անա, ընկեր-
ներիցս մէկը մեզ դաւաճանեց. փողի փայլից

կուրացած՝ թողեց մեզ և սկսեց պաշտպանել վաշխառուին. «Նա փող է տւել, պէտք է որ առնի:» — Իսկ բռնակալ և կաշառակեր դատաւորը. «Նա էլ ի՞նչ անէ, ծառայութիւնէ, եթէ թոյլ թողնէ՝ ամբոխը իրար գլուխ կը ջարդէ. իսկ կաշառք, նա բողոքովին չի վերցնէ, այդ զրպարտութիւն է»:

Մեր միւս ընկերը այս բանը տեսաւ, մտածեց, որ իր գործին էլ ձեռնառու չէ ազայի հետ վատանալը, տանուտէրի հետ հակառակէլը և ասաց: «Բան չունին, ժողովուրդը խոմ քոռ, չէ հէրն էլ անիծած՝ թող իր գլուխը ինքը պահէ»:

Երրորդ ընկերս տեսաւ սիրուն Լուսիկին, էլ ինչ իզէալ, ինչ գործունէութիւն. և Լուսիկին իր «թևին կարեց». անուշա, հոգիս, կեանքս, իզէալս և այլ խօսքերով կերակրւեց: Մնացի մենակ, իմ ընկերները ինձ թշնամի դարձան, սկսեցին ինձ ատել, ամեն ինչ քանդուեց... Ո՛հ, կեղեքողը սատանայական ժպիտը երեսին կարծես ինձ տառամ էր: «Տեսա՞ր ինչ եղար, ո՞ւր են քո

ցնորամիտ երագները. քոյլ ին պաշտպանել, ընկածին օգնել. դէհ, գնա, այժմս էլ մէկ ուրիշն է հարկաւոր, որ քեզ օգնէ: Ի՞նչ անէի, ո՞ւմ դիմէի. կարծես բոլոր մարդիք ինձ համար դե էին պարծել. հոգիս վրդոված էր, մարդկանց մէջ հանգստութիւն չէի գտնում: Եւ ահա ես առանձնացայ այստեղ: Այս ժայռի կատարից նայում եմ ներքև, այստեղ բնութեան իւրաքանչիւր երևոյթ կանոնաւոր է և որոշ, իսկ այնտեղ՝ մարդկանց սիրտը լիքն է ամեն տեսակ նենգութեամբ և խորամանկութեամբ: — Այս ասելուց յետոյ նա լսեց և սկսեց դառն կերպով հեկեկալ: Ես այլեւ չ'կարողացայ ինձ պահել, ընկայ նրա գիրկը:

— Մի յուսահատւիր դո՛ւ, ամբոխի փրկիչ, ասացի ես, դարձիր գէպի ժողովուրդը, ես կը լինեմ քեզ հաւատարիմ լծակից ընկեր...

— Ո՛հ, ո՛հ, միթէ դու մարդ չես, միթէ ճշմարտութիւնը ճանաչելը քեզ համար ծանր չէ,

հեռու ինձանից, ես ոչ ոքի չեմ հաւատում:

— Երգում եմ այն սրբութիւններով, որոնք ինձ համար թանկագին են, երգում եմ, որ ոչ մի բան չի կարող շեղել ինձ ուղիղ ճանապարհից:

— Երգում ես, իսկ ես՝ չեմ հաւատում, որովհետեւ կեանքում շատ տեսակ երգումներ լսեցի, որոնք շատ քիչ ժամանակ տևեցին:

— Զգում եմ ընկեր այն բոլորը, ինչ որ ասում ես, իմ սիրար նոյնպէս տանջւած է, ես էլ կարօտ եմ քեզ պէս ընկերոջ. ապա ուրեմն տուր ձեռք ինձ, մտնենք ամբողջ մէջ, որը արդէն անկման է դիմում: Այս կեանքը մերը չէ, այլ ժողովրդինն է, ո՞ւր կարող ենք փախչել նրանից. նա մեզ է կարօտ...

— Մենաւորը երեսի մագերը յետ տարածեալ ուղիղ աչքերիս մէջ նայելով պայց:

— Արդեօք չե՞ս խարում ինձ... արդեօք ճշմարիտ են խօսքերդ... Զը դաւաճանե՞ս ինձ կեանքում...

— Օհ... էլի՞ մտնեմ այդ ժխտի մէջ... Դի, Դի, մի դուցէ դարձեալ մենակ մնամ... դարձեալ նենգամեա օձը ծիծաղի իմ մենակութեան վերայ... Օհ ընկեր, չոքիր այս ժայռի չոր մէջքին և երգէիր, երգէիր այնպիսի բաներով, որոնք ներշնչեն ինձ հաւատ և համոզեն ինձ, թէ դու հաւատարիմ կը մնաս ճշմարտութեան՝ մինչև վերջը:

Եւ մենք չոքեցինք ժայռի չոր մէջքին ու սկսեցի ես երգել բարձր ձայնով:—
Երբում եմ քունակայի կրկից զսկումս անմեղ կոյսի սուրբ արիւնով:

— Երբում եմ վաշխաւորի ձեռքով զրկւած, աղ-
խառցած ընկալիքի, սրտատիկ կաթիլներով:
Երբում եմ կաշառակեալ դատարի դատաւ-
պառած անմեղ զրկի քառն անցանկեւորով, որ
սլ. հաւատ սի. դեղին. զսկին, այլ սիրուն Լուսիկի
պնուց խօսքի և զչեղի անփականակնի որոտը:
Եւ կարող շեղել ինձ ճշմարտարիւնից եւ յա-

ժամել ֆեզսնից:

— Թող վկայ լինի մեզ այս մերկ ժայռը.

— Թող լինի վկայ մինչև մեր մահը...

II

...Քամին հանդարտեց, ամպերը հեռացան, արևը փայլեց: Դաշտերը զարգարած կանաչ սաւանով, երգող թռչունների երամներով, անուշահոտ ծաղիկներով, մուշ-մուշ արածող նորածին գառներով՝ գմայեցնում էին մարդկային սիրտը: Ո՛հ, որքան գեղեցիկ էս ծերունի աշխարհ: Ահա այդ քաղցրութան ժամին, ծաղկազարդ, ընդարձակ մարգագետիններով արագարագ քայլերով գէպի մօտակայ մեծ գիւղն էին շտապում երկու ընկերներ: Ահա մօտեցան նրանք գիւղին: Գիւղի հարուստ վաշխառուի մեծ գամբուր իկսեց հաչել նրանց վերայ... Տանուտէրի շունը ձայնակցեց նրան. իսկ հարուստ ծերունի քահանայի սեւ զաղարը միացաւ նրանց հետ: Կարծես այդ շները չէին ուզում երկու



ընկերների դիւղ մանելը... Բայց նորա առանց ուշադրութիւն դարցնելու շների հաչոցին՝ մտան գիւղի ներսը և անյայտացան խուլ փողոցներում...

1909 թ.



բնական ազգայնականության բնական
 հիմունքները, որոնք հանդիսանում են
 մեր հայրենիքի և մեր ազգայնականության
 հիմունքները, որոնք հանդիսանում են

Ե. Ս. ԵՍԵՆ



ՀԱՅԿԱՅԻՆ
 ԱՊՐԵՐԻՆԻ
 ԲԱԼԵՏԱԿԱՆ
 ԶԳՈՒՆԱԿԱՆ
 ԳԵՂԵՍ

11

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Восточная
Библиотека
1999

1999

Учен. зап. кн.-б. Ленингр. ун-та. Библиот. восточ. яз. 1999

27613

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Գրին է 5 կող.

Դրմի՛ր՝ Կոր. Ախալքալիկի, Րեդաքցիոն «Ժաւախք»
• Միք. Մուրթաֆեանիւն.

<< Ազգային գրադարան



NL0352646

44941